ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Գ Ի Տ Ո Ւ Թ Յ Ա Ն Կ Ո Մ Ի Տ Ե

Ն Ա Խ Ա Գ Ա Հ

ք. Երևան «23» օգոստոսի, 2019 թ.

Հ Ր Ա Մ Ա Ն № 29-Ա/Ք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՀԱՇՎԻՆ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐՈՒՄ ԵՎ (ԿԱՄ) ԹԵՄԱՆԵՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ԲԱՐՁՐ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՄԲ ԱՇԽԱՏՈՂ ԳԻՏԱՇԽԱՏՈՂՆԵՐԻՆ ՀԱՎԵԼԱՎՃԱՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՀԱՅՏԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՅԹԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Առաջնորդվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի նոյեմբերի 17-ի «Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման կարգը հաստատելու մասին» N 1122 որոշմամբ հաստատված կարգի 3-րդ կետով, ինչպես նաև հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2019 թվականի օգոստոսի 23-ի N 557-Ա/2 հրամանը՝

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ

1. Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի հաշվին իրականացվող գիտական և գիտատեխնիկական գործունեության ծրագրերում և (կամ) թեմաներում ընդգրկված բարձր արդյունավետությամբ աշխատող գիտաշխատողներին հավելավճարի տրամադրման հայտերի ընտրության մրցույթը (այսուհետ՝ մրցույթ) պատշաճ կազմակերպելու նպատակով՝

1) Գիտության կոմիտեի (այսուհետ՝ կոմիտե) տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնին (պետի պարտականությունները կատարող՝ Շ. Աղաբեկյան)՝ քառօրյա ժամկետում ապահովել մրցույթի հայտարարության հրապարակումը զանգվածային լրատվության միջոցներով և մրցույթի հրավերի փաթեթի տեղադրումը կոմիտեի ինտերնետային կայքում.

2) կոմիտեի ֆինանսատնտեսագիտական և հաշվապահական հաշվառման բաժնին (պետ՝ Տ. Գալստյան)՝ ապահովել մրցույթի հայտարարության հրապարակման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների սահմանված կարգով տրամադրումը.

3) կոմիտեի գիտական քաղաքականության վարչությանը (պետ՝ Ա. Ջավադյան) և նույն վարչության գիտական քաղաքականության և զարգացման ծրագրերի բաժնին (պետ՝ Կ. Ղարիբյան)՝

ա. մրցույթի հայտ ներկայացրած գիտաշխատողների համար իրականացնել տեղեկատվական խորհրդատվություն,

բ. ապահովել մրցույթին առցանց հայտ ներկայացնելու վերջնաժամկետի ավարտից հետո կոմիտե տպագիր տարբերակով ներկայացված հայտերի տեխնիկական ստուգման իրականացումը (10 աշխատանքային օր),

գ. մրցույթի արդյունքների ամփոփումից հետո մրցույթի մասնակիցներին 5 աշխատանքային օրերի ընթացքում տրամադրել տեղեկատվություն՝ մրցույթի արդյունքների վերաբերյալ,

դ. կազմակերպել մրցույթի արդյունքներով ֆինանսավորման երաշխավորված գիտական թեմաների ղեկավարների հետ հավելավճարի տրամադրման պայմանագրերի կնքումը:

2. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել կոմիտեի գլխավոր քարտուղար Լևոն Մարդոյանին:

ՍԱՄՎԵԼ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ